ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.09.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/71

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ
Բողոք բերող՝ «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Ղազարյանի, ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՔԶԲԿ-ԳՀԾՁԲ-ՄՔ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, մարքեթինգային ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 06.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ին չկայացած հայտարարել 30.08.2021թ.-ի հրապարակված «ՔԶԲԿ-ԳՀԾՁԲ-ՄՔ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 06.09.2021թ.-ին:

07.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/71 համարի ծածկագիրը:

15.09.2021թ.-ին և 17.09.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.09.2021թ.-ին:

2. «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ն 06.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու) 30.08.2021 թվականին հրապարակել է «ՔԶԲԿ-ԳՀԾՁԲ-ՄՔ-21/6» ծածկագրով հրավեր (այսուհետ նաև Ընթացակարգ), իր կարիքների համար՝ մարքեթինգային ծառայությունների մատուցման նպատակով:

1.2. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալը «Մարքեթինգային թիմ

1. Թիմի անդամների քանակ 3 հոգի(առանց վարորդ),

2. Վարորդ 1 հոգի,

Մեքենայի բնութագիր

Շարժիչը՝ 3.2լ, 190ՁԻ/ՈՒԺ, Շարժիչի տեսակը՝ բենզինային , Թափքի երկարությունը՝ 4993մմ, թափքի լայնությունը՝ 1901մմ, Թափքի բարձրությունը՝ 1875մմ, Մեքենայի քաշը՝ 2080 կգ, Արգելակման համակարգը՝ ABS, անվտանգության բարձիկներ, Դիմացի նստատեղերի տաքացում, ապակիները և հայելիները էլ.կառավարմամբ, թափքի տեսակը՝ ունիվերսալ»:

1.3. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով հստակ ներկայացված չէ այն պահանջները, ծառայությունները մատուցման եղանակները և հասկանալի չէ իվերջո թե ինչ տեսակ ծառայություններ պետք է մատուցվեն ևր ինչ եղանակով, այլ միայն նշված է

ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցի բնութագիրը և մարդկանց քանակը:

ՀՀ գնումների մասին օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 17-րդ ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը՝ գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն են:

ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. (...):

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝

գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Կարգի 31-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ առանց նշելու անունը-ազգանունը: Ներկայացված հիմնավորումներն ընդունելի համարվելու դեպքում գնահատող հանձնաժողովը սահմանված ժամկետում դրանցով պայմանավորված փոփոխություններ է կատարում հրավերում

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ գնման առարկայի բնութագիրը՝ ի թիվս այլնի, ձեռք բերվող ծառայության ամբողջական և հստակ նկարագիրը պարունակող գնման առարկայի հատկանիշներն է, որը իր հերթին պետք է բացառի տարակերպ մեկնաբանությունները: Նշված օրենսդրական կարգավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկություններից պետք է հնարավորինս հստակ սահմանվեն դրա որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա: Այսինքն եթե ձեռք բերվող ծառայությունը իր բնույթով կրում է այնպիսի առանձնահատկություններ, որոնք լրացուցիչ պայմանների պարզաբանման կամ սահմանման անհրաժեշտություն ունեն, ապա այդ մասին նույնպես պետք է նշվի ձեռք բերվող ծառայության տեխնիկական բնութագրում, որպեսզի դրա կատարման փուլում հնարավոր լինի հստակ մեկնաբանել կատարման եղանակներն ու պայմանները, ինչպես նաև հնարավոր լինի ապահովել մեկից ավելի մասնակիցների մասնակցության ապահովումը, քանզի ոչ հստակ և ոչ ամբողջական տեխնիկական բնութագրի սահմանումը անուղղակի խոչընդոտներ կստեղծի մասնակիցների համար, որը իր հերթին կբացառի նրանց մասնակցության ցանկությունն ու հնարավորությունը: Նշվածով պայմանավորված Օրենսդիրը սահմանել է գնման հայտի նախագծմանը մասնակցող անձի

գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողության ունակության պարտադիր վավերապայման, ինչը պետք է որոշվի ելնելով գնման առարկայի տեսակից, այս նորմի նախատեսումը ոչ թե կրում է ինքնանպատակ բնույթ, այլ պարտադիր վավերապայման վկայակոչված սկզբունքները ապահովելու և տեխնիկական բնութագրի ամբողջական և հստակ սահմանումը ապահովելու համար: Իսկ եթե հրավերի տեխնիկական բնութագրով ամբողջական և հստակ սահմանված չէ ձեռք բերվող ծառայության նկարագիրը, ապա յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ դրանցում փոփոխություն կատարելու նպատակով: Ի դեպ հիմնավորումների ներկայացման համար Օրենսդիրը սահմանել է անանունության հնարավորություն ելնելով օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ Պատվիրատուն ցանկանալով ձեռք բերել մարքեթինգային ծառայությունների տեխնիկական բնութագրում չի ներառել դրա վերաբերյալ տեղեկություններ, այլ միայն նշել է ծառայությունները մատուցող թիմի և տեխնիկական միջոցի վերաբերյալ պահանջներ:

Հնարավորինս հստակ չսահմանված տեխնիկական բնութագիրը հնարավորություն չի ընձեռնում գնահատել հրապարակային օֆերտայով ներկայացված պահանջները և դրանով պայմանավորված մասնակցել գնման ընթացակարգին:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ին չկայացած հայտարարել 30.08.2021թ.-ի հրապարակված «ՔԶԲԿ-ԳՀԾՁԲ-ՄՔ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգը:

3. <u>«Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14429-2021 գրությամբ դիմել է «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 13.09.2021թ.-ին գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԿ ՓԲԸ-Ի կարիքների համար՝ «մարքեթինգային ծառայությունների» ձեռքբերման նպատակով «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԿ ՓԲԸ-Ի կողմից 30.08.2021թ.-ին հայտարարված «ՔԶԲԿ-ԳՀԾՁԲ-ՄՔ-21/6» գնման ընթացակարգի շրջանակում նախատեսված էր ձեռք բերել մարքեթինգային ծառայություններ, որի նպատակն էի բժշկական ապահովագրություն ունեցող շահառուների ներգրավումը և նրանց ուղղորդումը «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԿ ՓԲԸ, սկկայն տեխնիկական բնութագրում մի գուցե հնարավոր չի եղել հստակ նկարագրել գնման առարկան բնութագրից բաց են մնացել կարևոր էլեմենտներ, որոնք կամբողջացնեին ձեռք բերվող ծառայությունը»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի կողմից մարքեթինգային ծառայությունների ձեռքբերման նպատակով 30.08.2021թ.-ին հայտարարվել է «ՔԶԲԿ-ԳՀԾՁԲ-ՄՔ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 06.09.2021թ.-ին, ժամը 14:30-ին:

iii. «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ժամը 10:58-ին ներկայացվել է բողոք:

iv. Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 06.09.2021թ.-ին ժամը 11:05-ին:

v. Բողոքներ քննող անձի կողմից 07.09.2021թ.-ին ժամը 11:59-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ (այսուհետ նաև՝ Հայտարարություն) բողոքը ընդունվել է վարույթ:

vi. Հայտարարությամբ՝ Բողոքներ քննող անձը տեղեկացրել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը

հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

vii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղար է հանդիսանում Ն. Ավետիսյանը (այսուհետ նաև՝ Քարտուղար), իսկ որպես քարտուղարի էլ. փոստի հասցե նշված է՝ protender.itender@gmail.com:

viii. Բողոքներ քննող անձի էլ. փոստի հասցեից՝ Քարտուղարի protender.itender@gmail.com էլ. փոստի հասցեին ուղարկվել է բողոքը վարույթ ընդունելու մասին հայտարարությունը, բողոքը և կից ներկայացված փաստաթղթերը: Բացի այդ, Բողոքներ քննող անձը 07.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14429-2021 գրությամբ դիմել է «Քանաքեռ-Զեյթուն ԲԿ» ՓԲԸ-ին, հնարավորություն տալով «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը՝ միաժամանակ այն՝ 07.09.2021թ.-ին ժամը 15:11-ին ուղարկելով Քարտուղարի վերոնշյալ էլ. փոստի հասցեին:

ix. Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 07.09.2021թ.-ին ժամը 17:04-ին հրապարակվել է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշման մասին հայտարարությունը:

x. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ Մարքեթինգային թիմ, թիմի անդամների քանակ 3 հոգի (առանց վարորդ), վարորդ 1 հոգի, մեքենայի բնութագիր՝ շարժիչը՝ 3.2լ, 190ՁԻ/ՈՒԺ, շարժիչի տեսակը՝ բենզինային, թափքի երկարությունը՝ 4993մմ, թափքի լայնությունը՝ 1901մմ, թափքի բարձրությունը՝ 1875մմ, մեքենայի քաշը՝ 2080 կգ, արգելակման համակարգը՝ ABS, անվտանգության բարձիկներ, դիմացի նստատեղերի տաքացում, ապակիները և հայելիները էլ. կառավարմամբ, թափքի տեսակը՝ ունիվերսալ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ ... բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի (այսուհետ նաև՝ Հրաման) 9-րդ կետի համաձայն՝ բողոքը վարույթ ընդունելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Անձը բողոքը և դրա վերաբերյալ հայտարարությունը, հրապարակում է տեղեկագրում:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները: Նման պարագայում բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Բողոքներ քննող անձը բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, որի արդյունքում հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը գնման գործընթացը ինքնաբերաբար կասեցվում է:

Այսինքն գնման գործընթացը կասեցվում է օրենքի ուժով, այն է՝ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու մասին նախատեսված հայտարարությունը հրապարակվելու

օրվանից և շարունակում է ընթացակարգը կասեցված մնալ մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի կողմից մարքեթինգային ծառայությունների ձեռքբերման նպատակով 30.08.2021թ.-ին հայտարարված «ՔԶԲԿ-ԳՀԾՁԲ-ՄՔ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հայտերի բացման նիստի օր է սահմանվել 06.09.2021թ.-ին, ժամը 14:30-ին: «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ժամը 10:58-ին ներկայացվել է բողոք, որը Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 06.09.2021թ.-ին ժամը 11:05-ին: Այնուհետև Բողոքներ քննող անձի կողմից 07.09.2021թ.-ին ժամը 11:59-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, ինչով տեղեկացրել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Ն. Ավետիսյանի՝ protender.itender@gmail.com էլ. փոստի հասցեին Բողոքներ քննող անձի էլ. փոստի հասցեից՝ ուղարկվել է բողոքը վարույթ ընդունելու մասին հայտարարությունը, բողոքը և կից ներկայացված փաստաթղթերը: Բացի այդ, Բողոքներ քննող անձը 07.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14429-2021 գրությամբ դիմել է «Քանաքեռ-Զեյթուն ԲԿ» ՓԲԸ-ին, հնարավորություն տալով «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը՝ միաժամանակ այն՝ 07.09.2021թ.-ին ժամը 15:11-ին ուղարկելով Քարտուղարի վերոնշյալ էլ. փոստի հասցեին: Սակայն Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 07.09.2021թ.-ին ժամը 17:04-ին հրապարակվել է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշման մասին հայտարարությունը:

Սույն պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՔԶԲԿ-ԳՀԾՁԲ-ՄՔ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը՝ օրենքի ուժով, կասեցվել է 07.09.2021թ.-ին ժամը 11:59-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ, ինչի մասին գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը տեղեկացվել է, նույն հանձնաժողովի քարտուղարի՝ Հրավերում նշված էլ. փոստի հասցեին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ որևէ դրույթ առ այն, որ Բողոքներ քննող անձն Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակելուց բացի, պետք է այդ մասին ծանուցի նաև Պատվիրատուին և/կամ գնահատող հանձնաժողովին: Ավելին, Պատվիրատուն և/կամ գնահատող հանձնաժողովը, ինչպես նաև հանձնաժողովի քարտուղարը պարտավոր են մինչև հայտերի բացման վերջնաժամկետը լրանալը հետևել պաշտոնական տեղեկագրի՝ www.gnumner.am կայքի բողոքարկման բաժնի ներկայացված բողոքների վերաբերյալ հայտարարություններ ենթաբաժնում առկա հրապարակումներին, որից հետո նոր միայն իրավունք կունենան անցկացնել գնահատող հանձնաժողովի նիստ:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքերից՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում կայացնելով գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, այն է՝ վերջինիս կողմից չի կասեցվել գնման գործընթացը, ինչի արդյունքում խախտվել է Օրենքի 51-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Անդրադառնալով բողոքաբերի կողմից ներկայացված բողոքի իրավական և փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան

ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ … կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի կողմից մարքեթինգային ծառայությունների ձեռքբերման նպատակով 30.08.2021թ.-ին հայտարարված «ՔԶԲԿ-ԳՀԾՁԲ-ՄՔ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ Մարքեթինգային թիմ, թիմի անդամների քանակ 3 հոգի (առանց վարորդ), վարորդ 1 հոգի, մեքենայի բնութագիր՝ շարժիչը՝ 3.2լ, 190ՁԻ/ՈՒԺ, շարժիչի տեսակը՝ բենզինային, թափքի երկարությունը՝ 4993մմ, թափքի լայնությունը՝ 1901մմ, թափքի բարձրությունը՝ 1875մմ, մեքենայի քաշը՝ 2080 կգ, արգելակման համակարգը՝ ABS, անվտանգության բարձիկներ, դիմացի նստատեղերի տաքացում, ապակիները և հայելիները էլ. կառավարմամբ, թափքի տեսակը՝ ունիվերսալ:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք:

Բողոքներ քննող անձը 07.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14429-2021 գրությամբ դիմել է «Քանաքեռ-Զեյթուն ԲԿ» ՓԲԸ-ին, հնարավորություն տալով «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի

կողմից 06.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում և որ «ՔԶԲԿ-ԳՀԾՁԲ-ՄՔ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը և այլն: Ավելին, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացված դիրքորոշմամբ փաստացի ընդունում է գնման առարկայի տեխնիկական բնութագրում առկա թերությունները:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն փաստում է, որ «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ չեն նկարագրում ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Պատվիրատուն, նման բնութագրեր սահմանելով, հնարավոր մասնակիցների համար ապահովել է մրցակցության անհավասար պայմաններ:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից առկա է Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, ինչը կարող էր հանգեցնել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և «ՔԶԲԿ-ԳՀԾՁԲ-ՄՔ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած: Սակայն նկատի ունենալով, որ բողոքի պահանջը կատարվել է. Ընթացակարգն արդեն իսկ չկայացած է հայտարարվել, ուստի բողոքով ներկայացված պահանջը դառնում է առարկայազուրկ, իսկ բողոքը՝ մերժման ենթակա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/71 ծածկագրով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**